

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Աղաբեկյանի կողմից՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ելնելով հասարակական անվտանգության ապահովման նկատառումներից՝ առաջարկում ենք օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած կամ» բառերը.

2) ակոսավող որսորդական հրազեն ձեռք բերելու իրավունք վերապահել օրենքի նախագծով նախատեսված մարմինների այն աշխատակիցներին, ովքեր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում զենք կրելու իրավունք են ունեցել՝

նախատեսելով նաև բացառություն՝ պայմանավորված այդ աշխատակիցների արձակման հիմքերով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Արթուր Օսիկյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության
բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ջենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ջենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի նախագծի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացության

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ N 18-Ն որոշման համաձայն:

Նախագիծը սոցիալական պաշտպանության ոլորտում ունի չեզոք ազդեցություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի
Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ
իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման
ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն
որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի
պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զենքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Զենքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ *Նախագծով ընդլայնվում է ակոսավոր որսորդական հրացան ձեռք բերելու իրավունք ունեցող անձանց ցանկը:*

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)
մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական
փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային
շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում
մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինեք չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության
գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի
ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու*
եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում
կարգավորման ացդեցության գնահատման

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացմանը պետական տուրքերի գծով, քանի որ Նախագծով ընդլայնվում է զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու իրավասության ունեցող ֆիզիկական անձանց շրջանակը: ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացման չափը գնահատել հնարավոր չէ՝ հաշվի առնելով զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար դիմող Նախագծով նախատեսված ֆիզիկական անձանց թվաքանակի անկանխատեսելիությունը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին**

Հոդված 1. «Զենքի մասին» 1998 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-246 Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասում «ձեռք բերել» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած կամ պաշտպանության, ոստիկանության եւ ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում ծառայությունից սահմանված կարգով արձակված, ինչպես նաեւ» բառերով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Զենքի մասին » ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի
ընդունման վերաբերյալ**

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է այն հանգանաքով, որ թե Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած, թե պաշտպանության, ոստիկանության եւ ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում ծառայությունից սահմանված կարգով արձակված քաղաքացիները մարտական եւ հատուկ պատրաստության շրջանակներում լիարժեք տիրապետում են ակոսավող թե մարտական եւ թե ծառայողական հրագենին: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ օրենքի նախագծի ընդունումը կարող է դիտվել որպես խրախուսանք ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած եւ երկարամյա ծառայություն անցած եւ սահմանված կարգով ազատված քաղաքացիների համար: